ԱՐԵՒԵԼՔ

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ · — ԹԻՒ Բ.

15 ՅՈՒԼԻՍ 1855.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐ ԱԳՈՒԼԻԿ . . . . . ՈՍԿԱՆԵԱՆ.
ԺԷՐԱՐ ՏԷ ՆԷՐՎԱԼ . . . . . —
ՈՒԲԻՔԱ . . . . . —

ԲԱՐԻԶ.

1855

ԱՐԵՒԵԼՔ

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ՀԱՅՐ ԱԳՈՒԼԻԿ

Այս տարի աւագ շաբաթի օրերը, Մխիթարեան միաբաներէ մէկը կրօնական մոլի եռանդով լցորովին արբշիռ Պէյօղլուի դռեհ մը մէջ հայ ուշիմ երիտասարդի մը կը հանդիպի, և շրփոթելով դանիկա հռոմէական կը կարծէ։ Արդարև ներելի չփոթ. վասն զի Մխիթարեանի միտքը, սիրտը, բոլոր մարմինը այնպիսի այլադէմ ուրախութեան մէջ կը ծփար, որ ամեն բան ծուռ կը տեսնէր, և դրեթէ ոտքը ո՛ր քարի վրայ դնելը չէր գիտեր։ Կրօնամոլը ժամէն կը դար, հայ երիտասարդը իր տունէ կ՚ելլէր, և դէպ ի շուկայ կ՚երթար։

— Ո՛ւր բարի, կըսէ անոր Մխիթարեանը զմայլուն դէմքով մը, սիրելի բարեկա՛մ.քեզ ըսելիք մը ունիմ և կ՚աղաչեմ .քիչ մը համբերէ։

Հայ երիտասարդը՝ մէյ մը անոր դինով երեսը կը նայի, կը

զնեէ, և շատ կը զարմանայ, ինչու որ անոր հետ տեսութիւն ընելը անգամ, բնաւ չը յիշէր. այլ անոր արտաքոյ կարգի վիճակը և կերպարանքը իրեն մեծ զգղիւ մը կը տան։ Ուստի կանգ կ'առնէ, կը մտքի, և անոր բարեկամական շարժում մը կ'ընէ։ Ժամը կը նայի որ դեռ կանուխ է, և շուկայ երթալու դեռ բաւական ժամանակ կայ. ա՛լ չը կրնար զիմանալ, միտքը կը դնէ Մխիթարեան մոլիին քիթէ բռնել և անորմէ վրէժ առնել, այսինքն անոր վրայ խնդալ, վասն զի Մխիթարեանը ծիծաղէ ուրիշ արհամարհի միայն արժանի է։

— Երկար ատեն կայ որ զքեզ չը տեսայ, կ'ըսէ կրօնամոլը, ո՞ւր ես. ի՞նչ կ'ընես. այդչափ մեզ մոռնալ կ'ըլլա՞յ մի։

— Ի՛նչ ընենք, վերապատուելի, հիմա գործի մէջ ենք, և առուտուրի կը պարապինք։

— Լա՛ւ, սիրելի իմ, այլ անոր համար մարդկային պարտքերը մոռնալու չէ։

— Ներէ՛, վերապատուելի, երիտասարդի միտքը միշտ վաղվընուն է, ինչով և զրաւի, անով կը հմայի, անոր ետեւէ կ'իյնայ անդադար, և ուրիշ ամեն բան կը մոռնայ։ Կը յիշե՞ս, մեզի հայերէն դաս տալու ատենը կ'ըսէիր միշտ թէ « զատարկութիւնը ամեն չարիքներու մայր է »։ Ես այն օրինակը յարաժամ կը յիշեմ, և քու պատուէրը իրօք կը կատարեմ այս ինքն իտուէ և ի դիշերի կը զբաղիմ։

— Ապրի՛ս, սիրելի իմ, երանի՜ թէ բոլոր իմ աշակերտները քեզ նմանէին. ուներկայ եմ թէ, դու իմ բոլոր միւս կրօնական դասերը՝ միտքդդ չ'ես հաներ։

— Ոչ բնաւ, հայր Ադուլիկ, կ'ըսէ հայը հեղնաբար, կը յիշեմ այլ.....։

— Վա՛յ ինչամ չ'ես կատարեր, այնպէս չէ՞։

— Մարդարէացար, հայր Ադուլիկ։

— Վա՛յ, այդ ի՞նչ ըսիր, սիրելի, հաւատոյ պատուէրը յիշելը և չը կատարելը, պարզապար չը կատարելէ աւելի մեղք է։ Պէտք չէ՞ որ առուտուրի կամ ուրիշ զբաղումի համար երկնային պատուէրը ոտքի տակ առնես, և մամոնայ ըսուած կուռքը, բարէն աւելի սիրես. վասն զի, ինչպէս կ'ըսէ Բազմավէպը, « մարդ ամեն բանէ առաջ իր յաւիտենական երջանկութիւնը հոգալու է, իր յաւիտենական երջանկութեան լուսաւորութիւնը » անշէջ պահելու է։ Բազմավէպը կը կարդա՞ս։

— Բնաւ ամենևին, այդ կաշի երես տեսրը հիմա համ հոտ չունենալէ ետև, մոլի գրութիւններու թոյն մը կը բուրէ։

— Ի՞նչ կ'ըսես. չէ՞ս գիտեր թէ հիմա Բասիլիկոսը է անոր առաջին շարադիրը։

— Ով կ'ուզէ թող ըլլայ. ես մէկ տարիէ ի վեր անոր երեսը տեսած չեմ։

— Որո՞ւ։

— Բազմավէպին, այս յայտնի է, և տեսնալու ալ փոփաղ չունիմ. հերիք է, զզուեալ եմ գիմակաւոր մարդերէ, և Վենետիկի վանքը միահամուռ կ'ուտեմ։

Այս խօսքի վրայ, հայր Ադուլիկը այլ յայլմէ և գրեթէ ապուշ՝ երիտասարդին երեսը կը նայի իր աչերը կը բանայ. և անասունի զարմանք մը յայտնելով, մեկնութիւն խնդրելու շարժում մը կ'ընէ. այլ մէկէն յիշելով թէ այս նիւթի վրայ բանակռիւ մը սկսելու ըլլայ նէ, իր բուն նպատակէ կը հեռանայ, և այն սուրբ օրերու վերաբերեալ պաշտօն մը չը կատարէր, ապուէսի արագութեամբ դէմքը կ'այլայլէ, շուրթերը կը լգէ կը լգմոշէ, հային ալ կողմը կը դառնայ, մօտուքը կը մնկէ, և քիչ մը ուելի մօտենալով կ'ըսէ անոր. Սիրելիս հիմա Բազմավէպը մէկ դի թող մնայ, ուրիշ, անգամ ես կրնամ երկարօրէն անոր վրայ խօսիլ, և հաստատել թէ հայր Բասիլիկոսը.....

— Անհման կեղծաւոր մը է այնպէս չէ՞, հայր Ադուլիկ։

— Մեղայ ըսէ, սիրելի իմ, գիտես թէ այսօր աւագ ուրբաթ է, և թշնամանելը մեղք է։

— Ճշմարիտ ըսելը փառք է, և պարտք։

— Այս օր դու քիչ մը թթու բերան ես. ինչու չեմ գիտեր։

— Մեղրբերանը ամեն բան թթու կը գտնէ։

— Ի՞նչ. մի՛թէ վարժապետդ ալ ծաղրե՞լ կ'ուզես։

— Բա՛ւ և մի՛ լիցի. մի՛թէ ես քենէ չը սորվեցայ թէ վարժապետը երկրորդ հայր է և.....

Ան ատենը հայր Ադուլիկը անհամբեր շարժում մը կ'ընէ, և աչ ուսին վրայ շիլ ու փոթ աչով մը կը նայի, այլ նորէն իր առաքելական պաշտօնը յիշելով, ապրայ կը սեղմէ. և մոլորեալ ոչխարը կորուստի համբու վրայ չը թողում ըսելով, թաշկինակը կը հանէ, կը հազայ; կը խնչէ, կը թքնէ (այս ամենը ժամանակ շահելու համար) ու վերստին կը շարունակէ այսպէս,

— Հատմէն նոր կոնդակ եկաւ գիտե՞ս մի։

— Չ'եմ զետեր. Թոփալ Ահմեթէ նամակ մը եկաւ ըսէիր նէ, կարելի է թէ աւելի քրքիր մը ունենայի։

— Դեզ տեսնեմ, սկսէ նայիմ, հիմայ ալ բաբին քար նետէ կատարեալ ըլլայ. այսօր աւաղ ուրբաթ է, չկայտեմ հրէայէ մը ինչ տարբերութիւն կ'ունենաս այն ատենը։

— Բաբին անունը մէջ մի' բերեր, հա՛յր Ադուլիկ, կ'աղաչեմ, ես իրրև մարդ կը յարգեմ զանիկա։

— Հապա ինչ՞ու Բաբին անունը տամ նէ ծունրի վրայ չես զար, և մահմետականի անունը անոր անունի հետ քու բերնէ կ'ելլեն։

— Աս ալ մարդ՝ ան ալ մարդ, ինչ կ'ըլլայ եղեր հայր Ադուլիկ. այլ մի բարկանար, կ'աղաչեմ, գետես որ քիչ մը ազատբերան եմ, այլ սիրտս մաքուր է։

Շնորհակալ եմ որ ինծի ազդ ըրիր թէ, այսօր աւաղ ուրբաթ է. կարմիր..... հա՛ վկիթ..... պիտի ուտենք քանի մը օրէ։

— Խոստովանանք եղա՞ր։

— Չ'է։

— Ե՞րբ պիտի ըլլաս, օր ժամ չը մնար։

— Ըլլալու միտ չ'ունիմ հայր Ադուլիկ։

— Կարծեմ թէ, անցեալ.....

— Այո՛ անցեալ տարիէ ի վեր խոստովանանք չեղայ. և ո՛վ գիտէ երբ պիտի ըլլամ։

— Ի՛նչ կայ, սիրելի իմ, ինչ բան կ'արգիլէ զքեզ որ այսպիսի աւաղ օրեր մաքրըւելու և աստուծոյ մօտենալու փափաղ չ'ունենայիշէ՛ մէյ մը, բարեկամ, թէ խոստովանանքը քրիստոնէութեան ամենէ նշանաւոր պատուէրը է. անով միայն մարդ մեղքերու բեռէ կ'ազատի, երկրային կեղտէ կը սրբըվի, մահաբոյր կիրքերը կը սպաննէ, միով բանիւ ըսեմ Բաբին հաճելի կ'ըլլայ։

— Ի՛նչ ըսիր, հայր Ադուլիկ։

— Բաբին հաճելի կ'ըլլայ ըսի, և կը կրկնեմ ու վրայ կը բերեմ թէ՝ այն հաճութիւնը առնելով, չիտակ արքայութիւն կ'երթայ։

— Հապա այն հաճութիւնը չ'առնելու ըլլայ նէ, ո՞ւր կ'երթայ։

— Ուղղակի դժոխք։

— Ուղղակին ո՛ւրկէ գտար, հայր Ադուլիկ. միթէ Վենետիկի վանքը երկնագիր թուղթեր հնարեր է, և այն համբան զծագրեր նշանակեր է. նայէ՛ հայր Ադուլիկ չիտակը ըսեմ, այդ չէի գիտեր։ Շատ ուրախ եմ որ իմացայ թէ ուղղակի համբայ մը կայ հոն երթալու համար. ես ուղղակի համբան կը սիրեմ. կ'ըսի թէ

առաքինութիւնը հոն կը թափառի, և իր մերկ և փոշելի ոտերը անկէ չ'են հեռանար. աւելի լաւ կը համարիմ այն ուղղակի համբան առնել . . . . . :

— Դժոխք կը տանի կ'ըսեմ քեզ, չը լսե՞ս :

— Ո՛ւր ուզէ թո՛ղ տանի, հոգ չէ : Աւելի լաւ կը համարիմ, վերատին կ'ըսեմ որ դու ալ ապրկ մը լըսես, այն ուղղակի համբան բռնել, քան թէ Հռոմի կոզմնակի համբան առնել և անդիի աշխարհը երթալ :

— Մեղայ ըսէ՛, այսպիսի օրեր . . . . .

— Մեղա՛յ հայր Ագուլիկ, ըսաւ ան առնը հայ երիտասարդը բերանալիր քահրամ մը առնելով, և հեղնական աննկարելի շարժում մը ընելով :

Կրոնամոլ Մխիթարեանը այս լսելու ժամանակը, յանկարծակի կը դայ, ինչպէս կ'ըսէ արկեանը, ո՛ւր ըլլալը չը յիշէր, ո՛րու հետ խօսիլը չը գիտէր, ի՛նչ ըսելը չը դդար, և ապուշ ապաբան անոր երեսը, կը նայի, կը մնայ : Թանի մը վայրկեան այսպէս կենալէ ետև, ի վերջէ կ'ուշաբրի, և տեսնելով թէ անիկա դեռ շուրթերը կը տարուբերէ, և կծու կերպով կը ժպտի « կատակը մէկդի թողունք, բարեկամ, կ'ըսէ Մխիթարեանը, ծանր դեմքով և կախ երեսով մը. հաւատոյ խնդիրը պատկառելի բան է, ամեն առեն, մանաւանդ այս պարագայի մէջ և այս օր :

— Գիտնաս, հայր Ագուլիկ, թէ կատակ չեմ ըներ, այլ հշմարիտը կ'ըսեմ. այս է իմ այժմեայ ներքին համոզումը, ինչպէս կ'ըսէ սևերես լրագիր մը :

— Ուրեմն դու Լուտերիկ ես :

— Ադ ի՛նչ է, հայր Ագուլիկ, այդ բառը ուրկէ՞ հնարեր ես :

— Հայր Խալլիկին հնարած բառը է ան.

— Լա՛ւ. այլ նախատական բառ մ'է լուտերիկը, ան ալ գիտես մի՞ :

— Գիտեմ, և անոր համար կ'ըսեմ, վասն զի Լուտերի յիշատակը մշտատև նախատիքի արժանի է :

— Շատ լաւ. համամիտ եմ, այլ եթէ ուրիշ բանասէր մը ելլէ, և քեզ նըմանեներու Հռոմիկ կամ Բաբիկ ըսէ, այն առենը ի՛նչ կ'ընես :

— Վենետիկի ճեմարանէ (1) բանադրել կը տամ զան.

(1) Վենետիկի Միաբանութիւնը ինքիրեն ճեմարանի պատիւը կը տայ, ի՞նչ յանդգնութիւն :

— Ցանուն Բոտնեի, այնպէս չէ՞. Երանի՛ թէ այնպէս բան մը ընել տայիր վասն դի ան ատենը, այս երկու բառերը կ՚օրհնուէին, և նոյն հետայն ամեն մարդ կ՚ընդունէին։

— Զ՚ըսե՛ս թէ դու կատարեալ լուտերութիւն կը քարոզես։

— Կը սխալիս, հայր Ադուլիկ, ես լուտերութիւնը չեմ սիրեր. ինչի համար այն ամուլ անտերև ծառի մը կը նմանի. հովանի չունի, որ մարդ հոն ապաստնի. պտուղ չունի որ անօթի սիրտ մը հոն դիմէ և յագի. լուտերութեան ծառը, եթէ կը ներես այսպէս ըսել, միայն մեկ նարատակ մը ունէր մարդկային սեռի պատմութեան մէջ, յիսուսութեան (jésuitisme) աթոռը այրելու համար վայս տալ . . . . . ։

— Ուրեմն դու հերետիկոս ես

— Ամենևին ո՛չ։

— Անհաւատ ես, ուրեմն։

— Լեղուդ քեզի հաւքէ, հայր Ադուլիկ, այդ բառը բերանդ առնելու իրաւունք չեմ տար քեզ. վասն դի դու մարդարէ չես, և իմ սիրտի մէջինը չես դիտեր։

— Ա՛հ մոռցայ. դու չարափսա ես։

— Այն իմ դիտնելու բանը է. այլ ըսէ՛ մէյմը նայիմ, դու խոստովանանք եղար մի՞։

— Այո՛, ի՞նչ կայ։

— Վարդապետ պիտի ըլլաս, և չը դիտես թէ ուսկայ ըսելու հրաման չունիս թո՛ղ թէ . . . . .

— Դու ես պատմա, ըրիր չըրիր, ինծի մեղանչել տըւիր։

— Ուրեմն հիմա նորէն խոստովանելու պիտի՞ երթաս, ըսաւ հայը այն ժամանակ, ամեն բառերը հա՛ տա՛ տաղելով և հեղնալի դէմքով մը։

— Նայէ՛ մէյ մը, ես դինքը խոստովանելու հրաւիրեմ ըսելու ատենը, կը մտածէ Մխիթարեանը այն բոպէի մէջ, անիկա դիս հոն կը հրաւիրէ. արդա՛ն անլուր յանդգնութիւն։ Այո՛ պիտի երթամ և դո՞։

— Ո՛չ բնաւ։

— Վա՛յ քեզ. կը ցաւիմ որ այդ մեղսալի յամառութեան մէջ ընկեր ես։

— Ուրեմն խոստովանանքէ հրաժարիլը կամ հեռու կենալը մե՞ղք է։

— Այո՛, մահաձու մեղք։

և անկէ ետքը առնաբար կռուելու կարող ըլլան. և Վենետիկի Միաբանութիւնը կը լռէ, և խոստովանելու գալ չուզէր, և հայ երիտասարդին վրայ մուր քսել կը յանդգնի, ո՞ւր, ո՞ր ժամանակ, ո՞ր երկրի վրայ, և ո՞ր ազգի մէջ այսպիսի վարք մը արդեօք տեսնուեր է. այս ի՞նչ ուղղափառութիւն է. ա՞յս է մի հռոմէական քաջութիւնը։ Դիտե՞ս մի, հայր Ագուլիկ, թէ Եւրոպայի մէջ ի՞նչ անուն ունի այն մարդը՝ որ բանակռիւ մը սկսէ եւ վատօրէն խոյսկը տայ, և մարդու պատիւը մրելով կ'ուզէ յաղթել.....

— Կա՛նէ նայիմ, բարեկամ, կա՛նէ, կ'ըսէ ան ատենը հայր Ագուլիկը. քիչմը խելաբրելով, համբերէ՛ որ այս կոիւի ամէն պարագաները լաւ մը յիշեմ. մէկ տարի առաջ ես Պոլիս չէի, Պարսկահայերու հռոմութիւն քարոզելու համար համբորդութիւն կ'ընէի։

— 1853 Հոկտեմբերի Բազմավէպին թիւերը կը յիշե՞ս։

— Այո՛. փառք աստուծոյ որ ասանկ յուսաւորեալ դարու հասանք, անունով յօդուած մը կայ հոն այնպէ՞ս չէ։

— Ճիշդ դտար. այլ անկէ առաջ դիտես որ Վենետիկի վանքը հայերու հերետիկոս ըսաւ։

— Շատ աղեկ ըրաւ։

— Թէ աղեկ ըրաւ, թէ դէշ՝ այն իմ դիտնելու բանը չէ։ Բազմավէպը այս բաւական չը սեպեց, և հայերու կողմէ գտած դրամական նպաստը, բարոյական և նիւթական պատիւը, ապերախտ սիրտով ոտքի տակ առնելով, սիսաւ այլանդակ դրութիւնը ևս հնարել թէ, հայ ազգին լուսաւորելու միակ համբան Հռոմի համբան է։

— Ապրի՛ շատ աղեկ է ըսէր։

— Ըսելը դիւրին է, հայր Ագուլիկ, յիմար մ'ալ օր մը կրնայ ելլել և անկէ աւելի անճոռնի խօսք մը առաջ նետել. այլ բանը այն դրութիւնը պաշտպանելը էր։

— Բազմավէպը չը պաշտպանե՞ց։

— Ամենևին. լռեց, և դեռ կը լռէ. վասն դի խօսիլը մանաւանդ գրելը խոստովանիլ է, և Վենետիկի Վանքը խոստովանանքը կ'ատէ։ Հարիւր յիսուն տարի է, հայր Ագուլիկ, որ Մխիթարեաններու այս կատակը կը տեսէ. հարիւր յիսուն տարի է որ Ս. Ղազարու կղզին կրօնական թատր մի եղած է. այլ դիտես որ բարեկենդանը, որչափ և երկարաւն ըլլայ՝ յարատև չը կրնար ըլլալ։ Դիմակը խայտառակութենէ ապահով կրնայ պահել, այլ

երբ շատ ատեն երեսին վրայ մնայ, կատակը շատ սուղի կը նստի մարդու։ Ի վերջէ մրրիկ մը կ'ելլէ, հով մը կը փչէ, շարժ մը կը հայթի, դիմակը վար կ'իյնայ, մարդը կամ անոր դիակը, մերկանդամ կ'երևայ։ Մինչև հիմայ Բազմավէպը և իրեն նման քանի մը օրագիրներ, կը յանդգնէին ըսել թէ « բաբային կրօնէ դուրս փրկութիւն չըկայ »։

— Անոնկ է փրկութիւն չըկայ։

— Թող անանկ ըլլայ, հայր Ադուլիկ, ես շատ ատենէ որ իմ փրկութենէ յուսահատ եմ, և որովհետև ա՛լ այն կրօնը չեմ ուզեր առնել, կրնամ ըսել թէ, յուսահատ պիտի մեռնիմ։

— Ա՜հ, բարեկամ, մի՛ այդպէս ըսեր, յաւիտենական հուրը մէյ մը յիշէ յաւիտենութիւն (éternité) ինչ ըսել է գիտես։

— Փիլիսոփայութիւնը փոքր ի շատէ կը հասկընամ, հայր Ադուլիկ, և անոր համար է որ Բազմավէպին ստայօդ գրութիւնը ինձի չազդեր, թեպետև այն մարդկային միտքի դէմ ըլլայ, և բարոյականը հիմնիվեր տապալէ. Սակայն, որովհետև անոր կատարումը այս աշխարհի վրայ չէ, ամեն առաքինի մարդ ուսերը վեր ընելով պահ մը կը ծիծաղի, և իր ճանբան կը շարունակէ։ Այլ, եկո՛ւ նայէ, հայր Ադուլիկ, որ Բազմավէպը հիմա ան գրութիւնը ալ բաւական չը համարիր. մոլի եռանդը անյաղ որդի կը նմանի, որչափ ուտէ, ճարակ գտնայ, այնքան աւելի կ'անօթենայ. և փափագելով որ այս մասին մէջ մոլի եռանդի գրօշակիր ըլլայ և միւս բաբային օրագիրներէ յառաջադէմ քալէ, կը յանդգնի հետևեալ վճիռը հրատարակել թէ « բաբային կրօնէ դուրս լուսաւորութիւն չը կայ։

— Յաւիտեան ապրի Բազմավէպը, ապրի՛ հայր Տամենիկոսը, որ այսպիսի ազնիւ բան մը գրեր է։ Ես ի բոլոր սրտէ կ'ընդունիմ և զան պաշտպանելու համար իմ արիւնը թափելու պատրաստ եմ։

— Ո՛հ. հայր Ադուլիկ, հանդարտ եղիր, այդքան մեծ զոհ մը հարկ չէ, քիչ մը սեան թափես նէ բաւական է։

— Յամենայնի պատրաստ եմ, կը գոչէ հայր Ադուլիկ անատենը, և կը սկսի ուռիլ և պարծիլ. այլ քիչ մը օրօրուելէ և մտմտալէ ետև, կը շարունակէ ըսելով թէ իր քարոզութեան սուրբ պաշտօնը չը ներեր, որ բանակռիւի մը մէջ մտնայ, ինչու որ երեք օրէ ետքը համբոյ պիտի ելլայ, Հնդկաստանի կողմերը երթալու և այն տեղի հայերը ի բարութիւն դարձնելու համար։

— Ուրեմն, հայր Ադուլիկ, տեղդ ուրիշ շահատակ մը ընտրէ՛,

գի՛ր Աւետիք. Կիրակոս, Թադոս. Տոմնիկոս չա՛տ Մխիթարեան ներու մէջ։

— Ես ընտրելու իրաւունք չունիմ. այն մեր արբահայրին դիտնելու բանը է, միայն կը խոստանամ քեզ շիտակ շիտակ հայր Կողմային նամակ մը գրել և.....

— Անօգուտ ջան, և ունայն յոյս, կ'ըսէ հայ երիտասարդը զոգոալի դէմքով մը, չարափառի մը հետ կռուիլը զուրին բան չէ. հիմա Բազմավէպը վախէն ի՛նչ դրօշակ բանալը չիյտէ, ու այն պիսի տեղ մը քաշուեր սքլեր է որ ճիկ մը հանել չուզէր, որպէս զի չը յայտնուի և բանի ասպարէզ չը տարուի։

— Ո՛հ. ո՛հ. բարեկա՛մ, կարծեմ թէ հիմնովին կը սխալիս Բազմավէպը Ս. Ղազարու վանքին վրայ բաբային դրօշ առեր անկեր է, և սպառազէն կը հսկէ որ մեր սուրբ կրօնը չանարգուի։ Ո՛չ բնաւ. Բազմավէպը այնքան վատ չէ, հերետիկոսէ բնաւ չը վախնար, չարափառէ մը ամենեին չը խուսիր, հայու մը սպառնալիքէ մը բնաւ ամենեին չը զգար, իր դրօշակը դիտես ո՞ւր օրհնուած է.....։

— Գիտեմ հայր Ադուլիկ, շատ լաւ գիտեմ. այլ սուրբ Ղազարու պատնէշը մէկ դրօշակ չունի. կարելի է թէ զէնքեր և վահաներ ալ ունենայ, այլ կրնա՞ս մը ուրանալ թէ հոն շատ զիմակներ չկան։ Հայր Ադուլիկ, արդէն ես երկու նամակ գրեցի Դամիանոսին. մինչև հիմայ պատասխան մը չ'եկաւ և հաւատալ գիտեմ թէ չը պիտի գայ։ Երկու անգամ հայր Զէմբիկի գացի որ գրիչ առնէ մեր կրօնը պաշտպանէ, և չարափառ հայուն բերանը խփէ. անիկա ինձի պատասխան մը տալու տեղ զիմակ մը ձեռքը առաւ, նայէ ծակեր է ըսաւ, և կոնակը ինձի դարձուց։ Է՛ վերապատուելի, հիմա ես իրաւունք չունիմ մը ա՛լ Մխիթարեաներու քարոզին չը հաւատալ, և իրենց անոտի դրուածները արհամարհել. իրաւունք չունի՞մ մը մեր հաւատը չը պաշտպանել և անոր պատուիրանը չը կատարել, իրաւունք չունի՞մ մը բոլոր վանքը, արբահայրէ մինչև հայրը, հայրէ մինչև եղբայրը միահամուռ ատել և նզովել. իրաւունք չունի՞մ մը հոմոմթիւնը ուրանալ, անիկէ հեռանալ և հայերու մօտենալ։ Բարոյական վատութիւն մը աշխարհական մարդու մը անգամ ներելի չէ, թո՛ղ թէ կրօնաւորի մը. զիմակը մարդու մը չը վայելէր, թո՛ղ թէ հաւատաւոր երեսի մը. երկզիմի էակը հրէշ է, և հետևաբար բնութենէ դուրս։ Եւ երբ ես կը մտածեմ թէ մի և նոյն շուրթը հոս սիրոյ պաղիկ, և հոն

մատնութեան համբոյր կը տայ, երբ կը լսեմ թէ, մի և նոյն բերանը, հոս կը գովէ և հոն կը պարսաւէ երբ կ'իմանամ թէ ատ կ'երդէ, և անդ կը հայհոյէ, երբ կը զգամ թէ հոս կը շոյէ, և հոն կը վիրաւորէ, ա՜հ անատեն ամեն բան կը մոռնամ, սիրտս տա՜ կուվրայ կըլլայ, միտքս կը թնդայ և ահաբեկ կը հեռանամ ես այն մարդերէ և յուսահատութեան անդունդը կը գլորիմ.....

Հայր Ագուլիկը այս խօսքերու վրայ կը շուարի կը մնայ, և զգալով թէ ուշիմ երիտասարդին բառերու մէջ շատ ճշմարտութիւն կայ, մէյ մը ձեռքը դէպ ի ճակատը կը տանի. թեթեւարար կը որբէ կը չփէ զան, և կը սկսի մտածել, ինչու որ կը զգայ թէ կրոնատի անդանդէ հողի մը ազատելու ատենը իր ոտքը ալ հոն սահելու վրայ է, և մոլորութեան բռնաշունչ հովը հոն կը հրէ իր թեթև միտքը։

Ուստի քանի մը վայրկեան մտածելէ ետև գէմքը նորէն կը փոխէ, հանդարտ տեսք մը կ'առնէ, անուշ կերպով մը քմծիծաղ կ'ըլլայ, և կը շարունակէ այսպէս « բարեկա՛մ, չիտակը հրային երևակայութիւն մը ունիս, կայծէ մը կը բռնկիս, և շատ բան կը շփոթես թեպէտև շատ բան ալ վեհ կերպով կը տեսնես. այլ մի՛ մոռնար թէ մարդերու վատութիւնը կրօն մը չը կրնար արատել. մարդ երկրային գեռուն մ'է, և հաւատը երկնային պարգև մը. գեռունի թոյնը անոր չը կրնար ազդել։ Իրաւ է. ես ալ քեզի հետ կը հաւանիմ թէ կրօնաւորի մը երկդիմի ըլլալ չը վայելէր, կը հաւանիմ նաև թէ ներքին համոզումը գիտակ մը, կամ գոնէ քաղ մը, որչափ և բարակ ըլլայ այն, չընդունիր. պէտք է որ մերկանդամ ակներև ըլլայ։ Այո՛ կրօնակիր սիրտ մը պէտք է որ մաքուր հայելի նմանի, և կրօնը ինչպէս է, ինչ է, այն յայտնէ և գուրս տայ, այո՛, պէտք է որ աստուծոյ թարգմանը անկեղծ ըլլայ, և սուտը ու ճշմարիտը իրարու հետ չը գուգէ, կամ երկուքը ալ հաւասար չը յարգէ, վասն զի առաքինի մարդը կ'ատէ այնպիսի թարգմանը և, թէ ապան թէ անապան անոր աստուծմէ կը խորշի, կը հեռանայ։ Ինչպէս ըսի չեմ հաւատար թէ Վենետիկի Միաբանութիւնը այդ չափ վատ ըլլայ. կարծեմ թէ կը սխալիս, և անոր համար խստիս կը դատես։ Այլ համարէ՛ թէ իրաւունք ունենաս, համարէ՛ թէ նոյն վանքի կրօնաւորները այն աշխատանի մարդիկ են, մի՞թէ մեր կրօնը անոնցմէ կախեալ է, մի՞թէ Ս. Ղազարու վանքին սիրերու վրայ հաստատեալ է՞ յաւիտենական ճշմարտութիւնը, մի՞թէ սուրբ Պետրոսի վրայ հիմնեալ չէ հռոմութիւնը,

..... ի՞նչ կը խնդաս մի՞թէ ասոր վրայ ալ կասկած մը ունիս. բարեկամ դիտնաս որ հիմա Հռոմի մէջ հշմարիտ սուրբեր կան և ամեն օր հրաշքներ ընելով ամեն կոյր միտքերը կը լուսաւորեն ...

— Այդ ամենը հնարին է, վերադառնալի, դիտեմ թէ Հռոմի մէջ խելքէ միտքէ դուրս բաներ կը կատարուին, այլ խնդիրը հոն չէ. ես Մխիթարեանի մը հաւատալով հռոմէական եղայ, Մխիթարեանի մը մաքրութեանը և ուղղութեանը հաւատալով, իմ հայրական հաւատը թող տալի և բաբական եղայ : Ո՛հ ինչ սև օր է եղեր այն. հիմա առջի հաւատը չունիմ, և յետինը բոլորովին կորուսի. տեսա՞ր մը կեղծաւորութեան տակէ ինչ կ'ելլէ, և կրօնաւորներու երկպիմութիւնը ուր կը տանի աշխարհային ոդի մը : Ա՛հ հերիքէ, այսու հետև ինձի համար ամեն բան կատարեալ է, Վենետիկի վանքը ի բոլոր սրտէ կ'ատեմ, և հռոմութիւնն ալ արմատաբի կը խլեմ միտքիս մէջէ : Հեռի՛ ինէ Մխիթարեանը, և իր սեսթոյր ոտուէրը, հեռի՛ ինէ անոր թունալի զիրքերը, հեռի՛ ինէ մոլի կրօնաւորը որ անմեղ աղդի մը երեսը կը թքնէ, հեռի՛ ինէ այն հայը որ աղդութիւնը կ'ուրանայ, ինչ կ'ըսեմ, ազգը կրօնի կը զոհէ, և անդթաբար յօշ յօշ պատառելով դանիկա կտոր մը կ'առնէ Հռոմայ աթոռին առջեը կը նետէ :

— Այդպէս մի՛ ըսեր, սիրելիս կ'աղաչեմ, մի՛ բարկանար, հաւատը հաւատաւորէ դատէ՛. մասնաւորը ընդհանուր մի՛ ըներ. դու ալ լաւ դիտես թէ անդամանդը ուր տեղ և ընայ, որու ձեռք և երթայ միշտ անդամանդ է :

— Այդ շատ հշմարիտ է, հայր Ադուլիկ, այլ դու լաւ դիտես թէ այնպիսի ընութիւններ կան որ չարատուելու համար, և կաւի դալ չելլեն դանելով, անդամանդը հոն կը թողուն և կը հեռանան անկէ : Ես այսպիսի ընութեան տէր եմ, և այս պարծելու համար չեմ ըսեր. քու ըսած խաղրը կրնամ ընել, և շատ անդամ մտօք ալ ըրեր եմ, այլ միշտ ինձի անհնարին եղած է իրօք կատարել դան. չը կայ հրապոյր մը որ իմ սիրտը և միտքը արատելու զօրութիւն ունենայ ինձի համար : Պատիւը մարդու համար էական բան մը է, միւս ամենը դարդ է. այս զարդը կրնայ պակսիլ կամ կորսըվիլ, այլ պատիւը մէյ մը երթայնէ ա՛լ չը դար..... Կոյս մի է երկու անդամ չ'ապականալիր :

— Դու քիչ մը վիկիսովայօրէն կը խօսիս այս վայրկեանի մէջ. այլ ասով ըսել չ'եմ կամիր թէ, իրաւունք չունիս, ընդհակառակը. եկո՛ւ, բարեկամ կ'աղաչեմ ամեն բան մոռնանք.

— Ամեն բան կը մոռնամ վերասպատուելի, վատութենէ զատ վատութեան ներելը ուրիշ վատութիւն մ'է :

— Իմ յետին խօսքը ըլլայ քեզ. այսպիսի աւաղ օրեր անխոսաուման մի' մնար :

— Վենետիկի վանքին ըսէ' աղ :

Ան ատենը հայր Ադուլիկը զլուխը կ'օրէ, հանդարտ կերպով մը ձեռքը կը շարժէ, լռիկ բարև մը կըտայ, և ակնկոր անկէ կը հեռանայ : Ահա թող տեսնէ վանքը, կ'ըսէ իւրովի, քաղելու ատենը, ահա թող տեսնէ հիմա իրեն կեղծաւորութեան պտուղը. հաղար անգամ ըսի, բիւր անգամ գրեցի. ըսելէ բերանս խոտ բուսաւ, գրելէ մատերս սեցան, թէ օր մը այս երկրիմի վարոմէ և կապիկի բարքէ, շատ դէշ հետևութիւն պիտի ելլէ և մեր վանքը առակ նշանակի ըլլալէ ետև, հռոմէական անխաղ կրօնը ռամիկներու բերանը պիտի ընայ..... ահա այս է զիմակով կրօնական որսի ելլողին կատարածը. վա՛յ ինձի որ այս օրերու հասայ :

Այսպէս կ'ըսէ հայր Ադուլիկը, և յուսաբեկ իր սենեակը մտնելով աթոռի մը վրայ կը փռուի և կը սկսի խորին կերպիւ մտմտալ :

Երանի՜ թէ մտածումը յայր այլ փոխէր այս մոլի եռանդի հինօրեայ գինուորը :

Ամեն մարդ զիւրաւ կ'երևակայէ հայ երիտասարդին բերկրութիւնը. Պեյոզլուէ մինչև շուկայ երթալը ամեն բարեկամի կըպատմէ, և այն ալ բաւական չըսեպելով, գրելու կը սկսի. և իր հեռաւոր ծանօթներու աղդ կ'առնէ : Մենք ալ դուարճալի և ամեն պարագայով սիրուն նամակ մը կ'ընդունինք, և անոր վրայ այս յօդուածը կըշինեմք : Յետ գրութեան մէջ կը կարդամք թէ հայր Ադուլիկը յանդիմանական գիր մը գրեր է Վենետիկ և թէ չարաչար հայը ի վերջ է իր արժանի պատասխանը պիտի առնէ :

Տեսնենք :

Չարաչար հայը գրիչ իմեռին կը սպասէ :

Ոսկանեան.

ՊԱՏՄԱԿԱՆ

—

ԺԷՐԱՐ ՏԸ ՆԷՐՎԱԼ

Այս տարի տրտմալի դէպ մը պատահեցաւ Բարիզ մայրաքաղաքի մէջ. յունուարի 26ին առաւօտեայ ժամը հինգին Ժէրար տը Նէրվալը մարմինը կախեալ գտաւ, Վիէյլ լանդէն անուն անձնան և գարշելի գահին տան մը ստորը։ Այս անձնի լուրը շուտով բերնէ բերան տարածուելով, ամեն դրագէտ և ուսումնական մարդերու սիրտը տակուրայ ըրաւ։ Առջի բերան այնպէս կարծուեցաւ թէ անիկա գողերու կամ արիւնարբու մարդերու զոհ եղերէ, այլ ետքը յայտնի եղաւ որ թշուառ բանահիւսը ինք իր կեանքի վերջ դրեր է։

Ժէրար տը Նէրվալի այնպիսի ողորմելի մահով աշխարհէ ելլելը, մեզ յիշել կը տայ գրագիտական պատմութեան մէջ նշանաւորեալ անհաւատ բանահիւսներու կեանքը, որոնցմէ շատը կամ տուայտի չը դիմանալով, կամ ուրիշ մահածին հարուածէ մը վիրաւորեալ, և կամ մարդկային վատութենէ կամ ապականութենէ զզուեալ ինքնամեռ յաւետենութեան վիհը ընկան։ Այսպիսի նահատակներ ոչ միայն մեր օրերու պատմութեան մէջ կը յիշուին, այլ գրեթէ աշխարհի առջի օրէ մինչև հիմա, ամեն տեղ, ամեն ազգի մէջ պակաս չեն գժբաղդաբար։ Ապաշնորհ մարդկութիւնը, որչափ անոնք կենդանի են, անոնց երեսը չը նայիր, և երբ յուսաբեկ, կամ վշտահար սև հոգի ներքնը կ'իջնեն այն ժամանակ ո՛չ գովեստը կը պակսի և ոչ յիշատակարանը։ Այն ժամանակը ամենու մատերը պատրաստ են պսակ հիւսելու. ամեն աչերէ արտասուքը արտատոս կը թափի, և ամեն բերան լուութիւն պահելը ամօթ կը համարի։ Այսպէս է մարկիսային սեռը։ Մարդ կայ, հանճար կայ որ մահէ ետքը միայն սպրիլ կը սկսի։ Ցիրաւի Ժէրար տը Նէրվալի մահը բոլորովին թշուառութեան տալու չէ, և իր բազմաթիւ բարեկամները իրաւունք ունին բողոքել և ըսել թէ յուսահատութիւնը միայն ի մահ տարաւ զանի-

կա։ Մենք ալ այնպէս կը հաւատամք այլ երբ կը յիշեմք ամեն պա-
բաղմները, երբ կը քննեմք իր յետին վիճակը, և չքաւորութիւնը,
չենք կրնար ուրանալ թէ ողբատութիւնը ալ իր անողորմ և
սրածայր փուշերով զգուած չըլլայ զանիկա, որ այս տաժանալի
կեանքը թոյլ և մարդկային ընկերութենէ անդառնալի կերպով
հեռանայ։

Ինչ և ըլլայ այս ողէտքի պատճառը այն միայն անհերքելի է
թէ ֆրանսա հրշմարիտ զրադէտ մը, և բարի մարդմը կորուս-
թատրը քնքուշ հեղինակ մը, և արհեստը երկնաթեւ երևակայու-
թիւն մը։

Ժէրար տը Նէրվալը Բարիզ ծնած է 1808 ին Պարքայական պա-
լատի (Palais-Royal) մօտ գեղեցի մը մէջ. իր հայրը առաջին Նա-
բոլէոնի բանակի մէջ պաշտօնակիր վիրաբոյժ էր։ Երբ տասու-
թը ամսուան կ'ըլլայ, Ժէրարի հայրը կը ստիպուի հայրենիքէ
հեռանալ և բանակին հետ օտար երկիր երթալ։ Այն ժամա-
նակի սովորութիւնը կը ներէր որ բանակին պաշտօնական
մարդերը իրենց ամուսինը միատեղ առնեն։ Ժէրարի մայրը
երիկէն չուզէր զատուիլ, և իր նորաբոյս զաւակը հօրեղբայրին
քովը դնելով կ'ելլէ պատերազմի դաշտը կ'երթայ բանակի հետևէն։
Այս կինը Սիլեզիայ հասնելէ քանի մը ատեն ետքը կը հիւան-
դանայ և օտար երկրի վրայ կը մեռնի։

Ուստի կրնայ ըսուիլ թէ Ժէրար հաղիւ հաղ ճանչցաւ իր թշուառ
մայրը։

Հօրեղբայրին խնամքով Ժէրար բաւական մեծնալէ ետև Շար-
լըմայն անուն աղդպին վարժարանը կը մտնէ, և հոն ամեն բանի
մանաւանդ թարգմանութեան մէջ, գրեթէ միշտ առաջին կը
գտնուի։ Ամեն տարի պարապոյ ամիսները Բարիզի շրջավայրը
կ'երթայ իր հօրեղբայրի տունը, և հոն փոքր ի շատէ դիւղական
զբաղումով կը հրճուի մինչև դպրատան դառնալու օրերը։ Այսպէս
տարիներ կ'անցնին աշակերտը յաջող և յուսալի եռանդով առաջ
կ'երթայ, և Ժէրար վաստակաւոր կարիճ մը կ'ըլլայ։ Օր մը, պարա-
պոյ ատեն, իր հօրեղբայրի տունը գտնուելով կ'իմանայ թէ մօ-
տակայ տեղ մը շինականներու տօն մը կամ պարի հանդէս մը
պիտի կատարուի։ Ժէրար հոն կ'երթայ կը պարէ, կը զբօսնու,
դեղանի և շատ սիրուն օրիորդի մը կը հանդիպի, և իր հրայնին
երևակայութիւնը մէկէ ի մէկ կը բռնկի։ Այն վայրկեանի մէջ իր
սիրտը այնպիսի բուռն սէրմը կը զդայ որ մինչև ի մահ անկէ չել-

լեր և իր թշուառութեան ու կարճատև երանութեան պատճառը կ'ըլլայ : Ան օրիորդը, որու գրեթէ միտքէ անցամ չէր անցներ Ժէրարը, իրեն համար հրեշտակ մը կը թուի, և բոլորովին կը նուիրուի անոր :

Այս սիրով զբաւեալ և գրեթէ խելագար, նորատի Ժէրարը օր օրի վրայ ուսումէ կը պաղի, գիտութիւնը թարգմանութիւնը ամեն բան ոտքի տակ կ'առնէ. վարժատունը իրեն բանտ մը կ'երևի և գիրքի առջև իր միտքը այն դաշտերու վրայ միշտ կը թափառի ուր առջի անգամ տեսաւ այն բարեդէմ և անուշ օրիորդը և ուր ասիկա ամեն երեկոյ գալալի խոտերու վրայ պսպտելու կ'ելլէ :

Երբ Ժէրար վարժարանի մէջ այսպէս կը հալի ու կը մաշի, և տեսլական (idéal) աշխարհի մէջ իր մտայնին ուժը կը վատնէ, օր մը կ'իմանայ թէ իր սիրական օրիորդը ի հօրէ կամ ի մօրէ ստիպելով, վանք մը մտնելու և կոյս ըլլալու կը պատրաստուի : Այս լուրը անհնարին կսկիծ մը կը տայ իրեն. սիրտը տակուվրայ կ'ըլլայ, կը վիրաւորի, աշխարհէ զզուիլ մը կը զգայ, և տեսնելով թէ իր աշակերտի վիճակի մէջ, բան մը չը կրնար ընել, օրերով գրեթէ ինքզինքը կը մոռնայ : Ի վերջ յուսահատութեան դուռի առջևը դահավէժ չ'իջնալու համար, մանաւանդ իր վիշտը քիչ մը ամոքելու մտքով կը սկսի բոլորովին լեզուագիտութեան տալ զինքը, մանաւանդ արևելեան և Ալմանեան լեզուներու : Շատ չ'երթար Ալմանիայի հարուստ և վեհ գրագիտութիւնը իրեն ընտանի կ'ըլլայ, Շիլլէր, Կեօթէ և այն իրեն սիրելի և ոգեշունչ հեղինակները կ'ըլլան : Այս զբաղումէ շատ օգուտ և շատ ալ վնաս կը քաշէ կրակոտ Ժէրարը. իր բանկոն միտքը, որ արդէն սովորեալ էր անհիթ տեսիլներու հետ ապրիլ, կը սիրահարի ուրուական բաներու, այն երկիրը, դաշտը, վանքը մոռնալու համար ուր իր սիրուհին կրօնական ամուլ և հէգ քոյրի ներքևը, կը հնչուի և կը մաշի :

Ժէրար այն ատենը տասուքը տարեկան կ'ըլլայ. ի մտի կը դնէ Ֆօստին (1) թարգմանութիւնը հրատարակել, և կը սկսի մեծ եռանդով աշխատիլ : Այնպիսի հիշդ և ազնիւ ոճով ֆրանսերէնի կը դառցնէ զան, որ հեղինակը, մեծն Կեօթէ, անոր շնորհակալու միաքով նամակ մը կը գրէ, և մինչև հիմա Ժէրարի թարգ-

(1) Կեօթին ամենէ հրաշալի գրուածը :

մանութիւնը ամենէ դերազոյն կը համարի։ Ո՛վ որ գիտէ թէ Կեօթ ի՛նչ հեղինակ է, և մարդկային գրագիտութեան մէջ ի՛նչ վեհ աշտիճան ունի, գիւրաւ կրնայ երևակայել թէ անոր նամակը Ժէրարի օր մը հեղինակ ըլլալու վկայագիր էր։ Ժէրար մինչև մեռնելու օրը այն նամակը իբրև մասուք կը պահէր և միշտ պարծելով մը կը յիշէր զան։

Մինչ այս մինչ այն, Ֆրանսայի գրագիտութեան մէջ անաղին բանակռիւ մը կը ճայթի։ Մեկ կողմէ հին սինչիքոր դասականները (classique) և մեկալ կողմէ արի և անվեհեր վիպականները (romantique) իրարու վրայ երամովին կը գիմեն, ամեն զէնք կը շարժեն, ամեն կերպ պատնէշ կը հնարեն, որ իրար կործանեն, և բանի մը չեն խնայեր մանաւանդ վիպականները։ Ժէրար աս եաբինեերու կողմը կը բռնէ, արիւարար կը նետուի բանակռիւին մէջ, և իր ազգու գրիչէ վիրաւորած շատ դասականներ հինաւմին գիրքերու փոշիին վրայ կը տապալին, և կիսամահ կը մնան։

Ժէրար իր վիպական ընկերներէ մանաւանդ իր յատակ և անբիծ ոճովը կը տարբերի, և վերազոյն կը համարի մինչև հիմա. և կարծեմ թէ իր էական ու յարատև փառքը այն պիտի ըլլայ ապագայ սերունդի առջևը։

Ճշմարիտ գրագէտ մը բանակռիւ միշտ փառքով կ'ելլէ, և եթէ իրաւունք ալ չունենայ, իր հանճարը այնքան կը փայլի, իր զաղանի յատկութիւնները այնչափ կը նշանակուին, որ յաղթութիւնը կորուսընելով, մեծ համբաւ մը կը շահի։ Արդէն Ֆոսթի թարգմանութիւնը Ժէրարը նշանաւոր ըրեր էր ուսումնական ակումբի մէջ, այս բանակռիւը գինքը Բարիզի օրագիրներու առաջին շարադիրի կարգը կը հանէ և Մերքիւր դը Ֆրանս (Mercure de France) անուն լրագիրէ կը հրաւիրի որ բանասիրական և դատական մասը իր վրայ առնէ և ինքը գրէ։ Ժէրար այս մասին մէջ ալ կը նշանակուի և յաջողութիւն կը գտնայ. այլ այս գրաբումը բոլոր իր ժամանակը չը գրաւէր. օր, առեն կը գտնայ ուրիշ գեղեցիկ ալ պարապիլ և թատրային գրուածներ շարադրել։ Այս գրուածներու մէջ նշանակելու արժանի է Թարթիւֆ խառն Մոլիէրի (Tartufe chez Molière) անուն կատակը որ երկրորդական թատրի մը վրայ ներկայանալու օրը բաւական յաջող ընդունելութիւն գտաւ։

Այլ այս ամեն աշխատութիւնը և մտային զբաղումը իր սիրտի վերքը չեն կրնար փակել։ Ժէրար երբեմն երբեմն այնպիսի կսկիծ կը զգայ, այնպիսի մրրիկով կը տառապի, որ կամայ ակամայ իր սիրուհին պատկերը իր միտքէ չը կրնար հանել և միշտ անոր յիշատակով կ'այրի ու կը մրկի։

Ժէրար այսպիսի սիրաբեկ և կիսաւէր սիրտով ապրելու ատենը, երեկոյ մը թատրը կը մտնէ, որ միտքը իր վիշտերը մոռնայ և քիչ մը ուրիշ բանով զբօսնու։ Այլ ներս կը մտնէ չը մտնէր, տեսարանի վրայ սիրուն ու զուարթուն արարուհի մը (1) կը նշմարէ, կը նայի ու կ'երկրայի, կը զննէ ու նորէն կ'երկրայի. կը զգայ թէ անոր տեսքը իրեն անծանօթ չէ, այլ որո՞ւ հարցընէ, որո՞ւ յայտնէ իր սիրտի զաղտնիքը, ո՞ւրկէ իմանայ թէ այն կինը ո՞վ է։ Լաւ դիտէ թէ թատրային մարդերը ծիծաղասէր և թերահաստատ են սիրոյ կողմանէ, ուստի բան մը չը յայտնէր, կը լռէ և անտարբեր զէմքով մը զուրս կ'ելլէ, թեպետև իր սիրտը անասելի յուզումով մը կ'եռայ ու կը զեռայ նոյն վայրկեանի մէջ։

Այն դիշեր միչև առաւօտ այսպէս կ'անցընէ. հետևեալ առաւօտ դրեթէ արշալոյսին կտրը կը հեծնէ իր հօրեղբայրին դիւղը կ'երթայ, կը հարցընէ, կը ընտրէ, հին բարեկամներու կ'ողջէ և ի վերջէ կ'իմանայ թէ, արդարև իր սիրական օրիորդը կուսատուն մտեր է քանի մը ատեն, այլ այն զատն ու մոռնատու վիճակին չը կրնալով դիմանալ հանդերութիւնը հատեր է, իր քոյրը պատուեր, և դյուղը առեր քալեր է անկէ։

Ժէրար ասոր վրայ չափէ զուրս կ'ուրախանայ, ու շտապու վոյթ Բարիզ կը դառնայ, քանի մը բարեկամի ձեռքով բանը կը ստուգէ և ա՛լ չերկրայիր թէ այն նազելի արարուհին իր առջի սիրականը, և գրեչատակը է, որ վանքէ փախեր թատրի վրայ իջեր է։

Այլ թշուառ սիրտնոցը ի՞նպէս անոր մոռնայ, ի՞նչպէս անոր խօսի, ի՞նչ պատճառ բանէ իր սիրտի հին կրակը յայտնելու. հիմայ այն օրիորդը ամեն դիէ հրեշտակի պէս կը սիրուի, կը պաշտուի. և այնքան փառքի մէջ հինգ օրեայ և ոգայական հատակի սիրական մը իր միտքէ կ'անցնի մը հիմա.....։ Ժէրար որ ի բնէ հեզ և ամօ-

(1) Արարուհի, actrice.

թուն բարքի տէր էր, քանի մը օր կը տատամսի ճար մը չը գտնէր, այլ ի վերջ կ'որոշէ որ կատակերգութիւն մը (opéra-comique) մը շինէ և այն առթիւ արարուհին հետ տեսնելու և խօսելու պատիւ ունենայ։ Սակայն երբ իր փափագը կը կատարուի, երբ իր նպատակին կը մօտենայ, և երբ այնքան երկարատև վիշտերու տրիտուրը ընդունելու վրայ է, մէյ մ'ալ դլուխ կ'առնէ Բարիզէ կը հեռանայ, և օտար քաղաքներու մէջ թատրատակոն, իր սէրը նկարագրելու և երգելու հետ կ'ըլլայ։ Մարդ չ'իյտէ թէ ինչ պատճառաւ Ժէրար այսպէս յանուհատ իր սիրուհիէ հեռու կը խուսի։ Բանաստեղծի մը սէրը անիմանալի զգացմունք մ'է. խելք միտք չը հասնիր անոր։

Զը կարծէ մեկը թէ այս ընելով, Ժէրար ա'լ սէր չ'ունի, կամ յիշեալ օրիորդէ պաղեր է. ոչ բնաւ. վասն զի իր համբորդութեան մէջ հարուստ ինկիլիզուհիին կը ճանչնայ, որ իրեն կը զարնուի, և եթէ ինքը ուզէ ոչ միայն գիւրաւ անոր հետ կրնայ կարդալիլ, այլ և հարուստնայ, փառքի, պատիւի հասնիլ, և Լոնտրա դառնալ, անդորր կեանք վարել։ Ժէրար կը մերժէ և ամէն բան, ներկայ և ապագայ վիճակը, իր Բարիզի սիրուհիին կը զոհէ։

Քանի մը ժամակէ ետքը Ժէրար Բարիզ կը դառնայ. նորէն յոյսը իր սիրտի մէջ ծներ և բուսեր էր այն ատենը, այլ գժբաղդաբար սիրուն օրիորդը (որուն անունը է Ժէննի Բոլոն) վերջնաս մահէ մը կը մեռնի իր վարդային հատակին մէջ։

Աւելորդ է ըսել թէ, այս անակնկալ հարուածէ, Ժէրարի քնքուշ սիրտը անբուժելի կերպով կը վիրաւորուի, խելքը քիչ մը կը թնդայ, և սատանի տրամութենէ իր վրայ հով մը կը դայ։ Այն օրէ ի վեր թշուառ բանտարիւսը ուրիշ մարդ մը կ'ըլլայ. իր միտքը ու երևակայութիւնը, ա'լ նիւթական բաներու վրայ չեն ուզեր դադրիլ, երկիրը կը թողուն ու ամէն տեսակ հեշտալի երազներու ետեւէ կ'իյնան և անով կ'ապրին մարդկային երկրաքարշ ընկերութեան մէջ։

Բաւական ատեն տրտում ապրելէ, կամ աւելի ճիշդ ըսենք, երազելէ ետքը, Բարիզ ընակիլը իրեն անտանելի կ'երևայ և զոնէ աչով չը տեսնելու համար իր սիրականի յիշատակները, նորէն ի մտի կը դնէ ճամբայ ելլել և թատրատական նոր երկիր նոր երկին տեսնել և նկարագրել։ Այս նպատակով Եւրոպա, Ամերիկէ, Ասիա կը պտըտի, ամէն տեղ քաղաքային վիճակին յարմարելով տա-

հիկներու հետ տաճիկի, արապներու արապի կերպերը իրարա-
զանելով, որպէս զի ամեն բան ստուգիւ գիտնէ նկարել։ Երբ
Պոլիս էր, Պեյօղլուի անանուն և պիտակ (bâtard) ընկերութիւնէ
դանելով, և տեսնելով թէ՝ այն տեղի բնակիներու վրայ արևելեան
նշան մը չէ մնացեր. պարսիկի զգեստ մը կը զնէ Եղլտրզ խանը
սենեակ մը կը բռնէ և հոն կը բնակի. այս կերպով ամեն բանի
կատարելապէս կը տեղեկանայ։

Այս թշուառ հեղինակը Արևելքը շատ կը սիրէր, ինչու որ ամեն
համբորդէ աւելի հիշղ զննութիւններ ըրած էր տս երկրի սովորու-
թիւններու վրայ։ Իր Ճանապարհորդութիւն ի Արևելք (Voyage en
Orient) անուն գիրքը, ոչ միայն գրագիտական կողմէ ապուր
գրուած մ'է, այլ և ստոյգ տեղեկութիւններու մասին մէջ միւս վերի
վերոյ և շաղակրատ գիրքերէ վերադոյն կը դասուի։ Ծէրար փոքր
ի շատէ արևելեան լեզուները կը հասկընար, և հայ ազգի վրայ բա-
ւական համարում ունէր։ Յիշեալ գիրքին մէջ, տեղ մը կ'ըսէ թէ՝
հայերը տաճիկներէ յառաջադիմեն և Եւրոպայի ու Ասիայի մէջ յա-
բարերութիւն մը կրնան հաստատել։ Ուրիշ տեղ մ'ալ հայ նա-
հատակի մը գիակը տեսնելով, անոր վրայ շատ կը արտամի և ան-
թոյլատութեան դէմ կը բողոքէ։ Հոս արժան կը համարիմք քանի
մը տող թարգմանել և քանի մը սխալները նշանակել։

Ղալաթայէ իջնալով կ'ըսէ « տասը վայրկեանէ Պոլիսի ափը
ելանք և Պալըր Պազար ըսուած տեղը եկանք. հոն տարօրինակ
տեսարանի մը ներկայ եղանք։ Շուկային նեղ համբուրերանի մը մէջ,
շատ մարդիկ բոլորուեր հաւքբուեր էին. առջի անգամ այն-
պէս կարծիք ըրինք թէ, ծաղրածուներու կամ արջի կարաւի մը
մը հանդէս կար հոն, այլ ետքը ժողովուրդի մէջէ առաջ անցնե-
լով, գետնի վրայ փռուած զլխատ գիակ մը տեսանք եւրոպական
կապոյտ վարտիքով ու բաճկոնով. գլուխը գլխի փեղոյրով մը
ծածկեալ, երկու սրունքի մէջ գրուած կը մնար, որոնք իրարմէ
քիչ մը բաժանեալ էին։ Թիւրք մը հանչնալով թէ մենք Եւրոպեան
ենք, դէպ ի մեզ դարձաւ ու ըսաւ « Կ'երևայ թէ փեղոյր հագնող
գլուխները անգամ սրոյ հարակ կ'ելլան ու կ'իյնան »։ Թիւրքի մը
համար կարճ կամ երկայն փեղոյրը մի և նոյն նախապաշարումի
ենթակայ են. վասն զի մահմետականի մը արգիլեալ է պահպա-
նակով (visière) գլուակ հագնիլ, որպէս զի կարենան այն գլուակը
չը հանած իրենց հակառակը բախել աղօթելու տեղը — Երբ այս

ամենը տեսանք և լսեցինք, մեր սիրտը շատ դէշ եղաւ և դանիլ մը եկաւ մեր վրայ. անկէ ելանք շուկայ գացինք։ Հայ մը (1) մեղի հրաւէրը ըրաւ և իր հանութին մէջ մեզ օշարակ մեծարելէ ետև, այս անտեղի մարդասպանութեան պատմութիւնը ըրաւ մեղի։

Գլխատ մարմինը որ տեսեր էինք, երեք օրէ իվեր Պալըք պաղարի մէջ դրուած կը մնար. և հոն տեղ առուտուր ընողներու մեղամ շատ տրտմութիւն կը տար։ Այս մարմինը Յովակիմ անուն հայու մը մարմին էր, որ երեք տարի առաջ տաճիկ կին մը սիրելով (կարծեմք թէ հեղինակը կը սխալի) և անոր հետ բռնելով, սարսափեցաւ կամ մահը ընտրել կամ հաւատը ուրանալ։ Եթէ հայու մը տեղ, Թիւրք մը այս պարագայի մէջ գտնուէր, քանի մը փատ ուտելէ ետև, կ'ազատէր — Յովակիմը մահմետական եղաւ (կարծեմք թէ հեղինակը հոս ալ կը սխալի), այլ ետքը երկիւղը արհամարհելով տպաշաւի եկաւ. գլուխը առաւ Յոնիայի կղզիները տարուեցաւ, և հոն մահմետի կրօնը ուրանալ առաւ։ Երեք տարիէ ետև կարծելով թէ իր գլխէ անցածը ամենու միտքէ ելեր է, նորէն Պոլիս եկաւ եւրոպական հագուստով։ Կրօնամոլ մարդիկ մատնեցին զանիկա, և Թիւրքի տերութիւնը, թէպէտև շատ թոյլտու էր ան ատենը, ստիպուեցաւ մահմետական օրէնքը ի գործ դնել.....։ Այս պատմութիւնը մեղի ահագին ազդում մը տուաւ..... Երրորդ օրի երիկունը երեք հրէ այ, ինչպէս սովորութիւն է, գիակը չորակը տուին, և Պոսֆորի մէջ նետեցին ձիերու և շուներու դէշերուն քով.....»։

Արևելքի ճանապարհորդութենէ զատ, Ժէրարի ամենէ սիրուն գիրքը է, Լէօ Պիւրքար (Léo Burkart) ողբերգութիւնը (1838), Սայլակ մանուկի (Le chariot d'enfant) անուն դրուած մը ալ ունի որու բնագիրը հնդկային թատրէ առնուած է. և դեռ շատ ժամանակ չըկայ Օտէոնի տեսարանի վրայ ներկայացեալ։ Այլ իր վէպերու և լաւ ոտանաւորներու թիւը գրեթէ անհամար են։

Ժէրար բաւական ատեն ճանապարհորդելէ ետև նորէն հայրենիքը կը դառնայ, և գրելու կը սկսի. այլ իր մտային հիւան-

(1) Փափաքելի է մեզ գիտնել թէ ո՞վ է արդեօք այն հայը որ Ժէրար տը Նէրվալի հետ տեսնուելու, նստելու, խօսելու պատիւ ուներ է։

գութիւնը երթալով կը սաստկանայ, մինչև լուր կ'ելլէ թէ յիմարը էր. իր թշուառութիւնը ալ, միւս կողմէ, անդիի ծայրը կը հասնի, և կը բռնադատուի բարեկամներու օգնութիւնով ապրիլ։ Այս իրեն անպատիւ բան կ'երևի, կը յուսահատի և դամ քան զդամ կը սկսի անոնցմէ հեռանալ, հինուփուտ տուներու մէջ բնակիլ, գիշերները անվայել տեղեր ընալ, պառկիլ, և երբեմն շիտակ բանտ երթալ իբրև չար մարդ.....։ Երկար չ'ընենք, վասն զի մարդու սիրտը դէշ կ'ելլայ այսպիսի աղետալի բաներ պատմելու և գրելու ատենը, գիշեր մը երկար ժամանակ գուեհներու մէջ թափառելէ ետև. կը տեսնէ, թէ պառկելու տեղ մը չ'ունի, իր վրայ ատակ մը չը կայ որ տուն մը մտնէ. ցուրտը սաստիկ, օդը սառնալի, վրան լարակ, կը մսի կը դողդայ, կը դողդոջայ, կը յուսահատի, չուան մը կ'առնէ, Վիկտ Հանկոն անուն առուելի գուեղը կը մտնէ, չուանը պատուհանի մը երկաթին կը կապէ. կղակը կ'անցընէ դան..... և Ժերարին հոգին անդիի աշխարհը սուառնաթև կը թռի իր սիրուհիին քով։

Հետևեալ առտու, թշուառին մարմինը մահատունը (morgue) քարի մը վրայ մերկանդամ կը մնար, և շատ հետաքրքիր մարդեր տեսնելու կ'երթային։ Հայ մ'ալ հոն կ'երթայ, և յանպատրաստէ հետևեալ ոտանաւորը կը շինէ, որ մեզի շատ հշմարիտ կ'երևի։

Սև քարի վրայ
Մարմին մի տարտնի,
Մերկանդամ է նայ
Ու հոգի ալ չ'ունի։

Մահարեր զոյնով
Երես իւր զարդարի,
Ծիծաղի շուրթով
Այլ շուրթ իւր դեռ կայտռի։

Իր հիտին վրա
Կապոյտ գոյն սոսկալի,
Ամենուն ահա
Յայտնապէս կ'երևի։

Շատ բարեկիրթ մարդեր
Կը նային ու կ՚երթան,
Մահ անդամ եղեր
Է հիմա տեսարան։

Անդրդայ պահակ
Որո՞ւ է այս մարմին։
— Սիրոյ նահատակ
Անտանեմ Ժէրարին։

ՎԻՊԱԿԱՆ

—

ՈՒՐԻՔԱՆ (1)

— Այդ ամենը ճշմարիտ է, պատասխանի տուաւ մարիշալուհին, այլ բարեբաղդաբար այդ ամենը անոր միայէ անդամ չանցնիր հիմայ, և իմ վրայ այնքան սէր ունի որ, կը յուսամ, երկար տաեն միայէն հեռու պիտի ընէ իր վիճակը։ Ուրիքան երջանիկ ընելու համար հարկ էր, իր ստորին վիճակէ վեր չը հանել. այլ այս հնարին բան էր մի։ Անկեղծաբար կ՚ըսեմ, ես չ՚եմ կարծեր։ Ո՛վ դիտէ կարելի է թէ բաւական վեհ սիրտ ունենայ ու զինքը իր վիճակէ վեր բանէ, որովհետև բաղդը այնպէս ըրաւ, որ չը կրցաւ իր վիճակէ վար մնալ։

— Կը խոստովանիս, ըսաւ սեղուհի տիկինը և անհիմ յուսով մը կ՚երերայ քու միտքը. յիրաւի փիլիսոփայութիւնը կրնայ այն աշխիճան վեր հանել զմեզ, ուր բաղդի նետերը կրնամք արհամարհել. այլ փիլիսոփայութիւնը չը կրնար պաշտպանել այն ադէտներէ, որք բնական կարգի դէմ գործելէ յառաջ կը գան։ Ուրիքան իր ճակատագիրը չը կատարեց. այն ճակատագրի հրամանին դէմ ընկերութեան մէջ մնաւ և օրմը ընկերութիւնը վրի-

(1) Տես Արեւելք թիւ Ա.

ժառու պիտի ըլլայ։ — Ցիրաւի, պատասխանի տալու մարեչալուհին, թշուառ օրիորդը այս կողմէ անմեղ է, դո՛ւ ալ բարեկամ, քիչմը խստիւ կը դատես զանիկա։ — Ես անոր քենէ աւելի բարութիւն կը կամիմ, կրկնեց սեպուհի տիկինը, ես անոր երջանիկ ըլլալը կ'ուզեմ և դու անոր կորուստի պատճառը պիտի ըլլաս »։ Այս խօսքի վրայ մարեչալուհին համբերութիւնը կորուս, և մաղ մնաց որ այս երկու բարեկամները, ինծի համար, իրարու հետ պիտի կռուէին. այլ սպասաւորը վրայ եկաւ, և ըսաւ թէ մարդ եկեր է։ Այս առթիւ, այն ատենը, ես ալ վարագոյրին ետևը խոյս տալի, և վազեցի սենեակս մտայ. ուր սրտոսուքի հեղեղ մը թափելէ ետև, իմ անմեղ սիրտը վայրիկ մը հանգարտութիւն գտաւ։

Այս կերպ մէկէ ի մէկ ամէն բան յայտնի ըլլալը, և կեղծիքը փարատիլը, կեանքիս մեծ այլայլութիւն մը տալու։ Աշնպիսի պատիր երեոյթներ և կեղծիքներ կան, որ օրական լոյսի կը նմանին, երբ մէկը զանոնք կորսընէ, մութ մը կը գայ ամէն բան անտես կ'ընէ։

Նոր տեսիլները, որ ամէն դիէ իս կը պաշարէին, այնքան շփոթութիւն կը տային ինծի, որ մինչև ան ատենը միտքիս առ օրեայ զբաղում եղած բաներէ մէկը չէի դներ. և արհաւիրքով լի վիհ մը կը տեսնէի միշտ առջևս։

Երբ կը մտածէի թէ, անպայտ ատելութիւն մը իս կը հալածէ, երբ կը յիշէի թէ, ընկերութեան մէջ տեղի մը չունիմ, երբ կը խորհէի թէ, մարդ մը ի սէր արծաթի, և ոչ ի սէր իմ, հաւանի պիտի իս առնել և սև դաւակներ ունենալ, սիրտս կը ճմլէր, և հետ դնեակ իմ տեսիլները դահիճի պէս կը չարչրէին զիս, մանաւանդ երբ միայնութիւնը կը յիշէի։ Այնու հետև համոզեալ էի թէ մինակ եմ երկրի երեսը, մինակ պիտի ըլլամ բոլոր կեանքիս մէջ. մարեչալուհին ըսեր էր, և հնար չէր որ ա՛լ ես մոռնամ։ Աւա՜ղ կը գոչէի ամէն վայրկեան մինակ եմ, միամինակ պիտի ապրիմ, վա՜յ ինծի. դեռ մէկ օր առաջ հոգս չէր և միայնութիւնէ չէի վախնար, քանզի այն ատենը չէի դիտեր թէ, ինչ է միայնութիւնը, բան մը չէի զգար այսպիսի վիճակի մը վրայօք. սէրի կարօտութիւն ունէի, այլ չէի դիտեր թէ, սիրեալը ինծի կարօտութիւն չունէր բնաւ։ Հիմայ աչերս բացան, ամէն բան տեսայ, և արդէն թշուառութիւնը, կասկածը սիրտիս մէջը դրեր էր։

Երբ մարեչալուհին սրահը դարձայ, իմ դէմքի այլայլութիւնը

ես կրօնական դպրոցում ունէի, յարդի քահանայի մը պարտականութիւն էի, որ առջի անգամ հաշակ ստանալու համար հարկաւոր եղած ամէն կրթութիւնը տալու էր ինձի։ Կրօնական դպրոցներս անկեղծ էին, այլ չէի գիտեր թէ կրօնասիրութիւնը շահաւէտ ըլլալու համար հարկ է որ կեանքի ամէն գործերու մէջ մտնէ և արդիւնաւորի։ Ես քանի մը օր միայն իմ կրօնական պարտքերը կատարեր էի, և յետոյ ամենեին հոգս չէր եղած։ Իմ խոստովանողս սուրբ ծերունի մը էր, և կոսկածը ինչ ըսել է չիյտէր։ Հաղիւ թէ տարին երկու, երեք անգամ զանիկա կը տեսնէի, և որովհետև չէի կարծեր թէ, կարդէ զուրս տրամութիւնը մեղք է, իմ վիշտերու վրայ անոր բան մը չէի ըսեր։

Այսպէս լեկեսին կը հալէի, կը մաշէի. ինչ տարօրինակ բան, վիշտերը իմ առողջութիւնը ապականելու տեղն, միտքս կը սրէին և անոր կատարելութիւն կը տային։ Արևելեան խնամատուն մը կ'ըսէ « այն որ վիշտ չէ կրեր, ինչ գիտէ »։ տեսայ թէ իմ թշուառութենէ առաջ, բան մը չիյտէի։ ինչ որ զուրսէ կը զգայի չէի դասեր, սիրտով կ'ապրէի, և ոչ միտքով։ կը սիրէի։ խօսք, գործ, մարդեր հաճելի կամ անհաճոյ կ'ըլլային սիրտիս, այլ միտքս բան մը չէր վճռեր։ Այլ հիմա միտքս, իմ սիրտի չը հետևիր, անկէ բաժնուած է, և բնական զրգռումը ալ ինձի սէր չը ընէր։

Տրտմութիւնը հեռաւորութեան կը նմանի, մանրամասն բանելու վրայ չը դադրիր, այլ միահամուռ կը գիտէ և կը դատէ։ Ես զգալով թէ, այնուհետև ամէն բանի օտարական եմ, ամէն բան խստիւ կը դատէի. ինչ որ մինչև այն ատենը անքնին ինձի հաճոյ եղած էր հիմա իմ քնութեան տակ կ'իյնար, և կուրօրէն էէր գովեր ինէ։

Հնար չէր թէ, մարեչալուհին իմ այս մտային վիճակը չը զգար, այլ ես երբեք կարող չ'եղայ գիտնել թէ արդեօք անոր բուն պատճառին վերահասու եղա՞ւ մի անիկա։ Կարելի է թէ, վիշտերս չը զգոնելու համար ինձի բան մը չէր հարցներ, և տարի մը չէր տար որ ես զանոնք իրեն յայտնեմ. միայն կը գիտէի որ սովորականէ աւելի անուշ կը վարուեր իմ հետս, մտերմաբար իր սիրտը ինձի կը բանար, և իմ վիշտերը ինձի մոռնալ տալու համար, իր վիշտերը կը յայտնէր, կը պատմէր։ Անիկա սիրտս լաւ կը դատէր, վասն զի այն վայրկեանէ իվեր կիսանքը աչքիս բան մը չէր երևար և անոր համար միայն կընայի ապրելու վասվոգիլ,

և անկեղծութեան առջև զինաթափ կ'ըլլար կը մնար։ Երկար չ'ընեմ իմ վիշտերէ բան մը չ'ըսի անոր. անկէ զատ իր երթը նոր դրաղում մը էր ինձի, և կարծեմ թէ, այն ատենը, իմ սովորական վիշտերը քիչ մը մեղմել տալու երբեմն երբեմն միտքս Շարլին տանելով և անոր սէրը յիշել տալով։

Ասոր համբայ ելլելէ քիչ ժամանակ ետքը Ֆրանսայի յեղաշրջումը (1) ծանր կերպարանք մը առնել սկսաւ. բոլոր օրը, մարեշալոհիին սենեակին մէջ ուրիշ բան չ'էր լսուեր եթէ ոչ քաղաքական և բարոյական խնդիրները որ յեղաշրջումը արմատաբի կը յուզէր և երևան կը հանէր։ Այս խնդիրները այն նիւթերու կը վերաբերէին որոնց համար ամեն ժամանակի վեհ միտքեր զբաղեր յուզեր են։ Իմ տեսիլները ծաւալելու և շոկելու համար այսպիսի առպարէզի մը տեսարանէ աւելի օգտակար բան մը չկար ինձի համար, ինչու որ այս առպարէզի մէջ երևելի մարդեր, երկբայելի մտքով, մաղէ կ'անցընէին այն առաջարկութիւնները, որք մինչև այն վայրկեանը գաղտնով կ'երևէին և հաստատուած։ Ամեն նիւթի յատակը կը բնտռէին, ամեն հիմի սկիզբը կ'ուզէին տեսնել, այլ շատ անգամ քայքայելու և տապալելու, քանթէ դարման մը տանելու սիրով։

Պիտի հաւատա՞ս մը հիմա, սիրելի բժիշկ, եթէ ըսեմ թէ այս յեղաշրջումը իմ տեսիլներու այլայլութիւն մը տալու, սիրտս յոյսեր բերու, և սրտի մը բոլոր իմ վիշտերը դադրեցուց. թէպէտ և այն ժամանակը նորատի, և ընկերական շահերու օտարական էի, և իմ ծածուկ վերքերով ապեկէզ կ'ապրէի։ Տե՛ս մէջմը մարդ որքան մխիթարութեան կարօտ է, և զան զանելու համար ինչպէս շուտով ամեն նիւթի կը վազթրտի։ Այսպիսի մեծ ալեկոծումի մէջ ինձի կը թուէր թէ, ես ալ մաս մը պիտի կրնամ առնել, և թէ, ամեն հարատութիւնները կործանելով, ամեն կարգերը շփոթելով ու հաւասար ըլլալով, և ամեն նախապատշարումը վերնալով, այնպիսի ընկերական վիճակ մը պիտի ծագէր, ուր ես այնքան օտարական էակ մը չը պիտի համարուէի. և եթէ քիչ մը հոգեկան վեհութիւն մը, կամ թաքուն յատկութիւն մը ունենայի,

(1) Թարգմանիչը ամենեին չ'ընդունիր հեղինակին կարծիքը, որ ոչ միայն անհիմ է այլ և անտեղի. Ֆրանսայի յեղաշրջումը մարդկային սեռի նոր դարը է. 89 թուականը վեհ էր, է, և պիտի մնայ ամեն ազգի համար։

կարելի էր որ այն ժամանակը անոնց արժէքը յայտնուէր, և այնուհետև իմ սև գոյնը պատճառ չը պիտի ըլլար որ ընկերութեան մէջ միակ և երեսի վրայ մնամ, ինչպէս և մինչև այն օրը եղեր էի։ Այլ ե՛կու նայէ՛ որ այն վեհ յատկութիւնները որ ես ինձի կը տայի, իմ մտածին յոյսի դէմ կը կենային, և ես երկար ատեն չը կրցայ ուրիշներու շատ դեղութիւն փափաղիլ, ինքնական բարութեան մը համար։

Ասկէ զատ նշմարելով այն մարդերու ծիծաղելի վարումը, որք կ՚ուզէին պատահարները (événement) նուաճել կամ արդելուլ, զատելով անոնց բարքի յանդուգնութիւնը, մարգարէանալով անոնց զարտնի դիտաւորութիւնը, ամեն յոյսը մէկդի դրի. ինչու որ անոնց սուտ փիլիսոփայութիւնը ալ ես չէր խաբեր, և ակներև կը տեսնէի թէ ամեն բան տակուվրայ ըլլալէ ետև, տակաւին անոնց սիրտի մէջ բաւական ատելութիւն պիտի մնայ սեռնի օրիորդի մը համար։

Սակայն այս տեսակ վէճերը ինձի հաճոյ կը թուէին, թէպէտ և հետ զնետէ այս վէճերը իրենց ամենէ սիրելի հրապոյրը կորուսելու վրայ էին։ Արդէն այն ժամանակը մենէ շատ հեռու էր, ուր բանավէճը միայն հաճելի ըլլալու համար ի գործ կը դրուէր, և ուր յաջողելու առաջին պայմանը էր, ինքնային սէրը մէկդի դնել և իսկէր ճշմարտութեան վիճել։

Երբ յեղաշրջումը պարզ նկատումէ (théorie) իրական բան մը եղաւ, և ամեն մարդու մտերիմ շահերու դպաւ, բանավէճը ճշմարիտ վէճի եղաւ, և թթու, դառն, և անձնական խօսքերը միտքի (raison) եղը առնուեցան։ Թէպէտ և ես շատ վշտահար կը մաշէի, սակայն երբեմն ակամայ կը խնդայի այս ամեն կատաղի կարծիքները լսելով, որք զրէթէ միշտ ինքնահաւանութեան, պարծենկոտութեան, և կամ երկիւղի աղբիւրէ առաջ կը գային. այլ այն զուարթութիւնը, որ մարդ ծիծաղելի բաներ դիտելով կը զգայ, երբեք մեզի բարութիւն չը տար. այսպիսի զուարթութեան մէջ շատ սատանութիւն (malignité) կայ, և սիրտը այն ատենը ճշմարտապէս կը հրճուի, երբ ուրախութիւնը, որ կը զգայ, անմեղ է։ Մարդ մը կրնայ այս հեղնալի զուարթութիւնը ունենալ, և այնու ամենայնիւ արատաբեկ կամ թշուառ ըլլալ. կարելի է թէ թշուառութիւնը ուելի ենթակայ կ՚ընէ զմեզ զան զգալու համար, վասն զի այս վատ հրճուի սովորական ճարակը, մեր հոգիին դառնութիւնը է։

Յեղաշրջումէ եկած վաղամեռ յոյսը, իմ սիրտի վիճակը չէր այլայլած. ես միշտ դժգոհ էի իմ հակատագրէ, և իմ վիշտերը չէին մեղմըւեր, եթէ ոչ մարեշալուհին բարութիւններովը և վստահութեամբը։ Երբեմն քաղաքական բանավէճերու մէջ, որոնց թթուութիւնը մարեշալուհին միշտ կերպով մը կը մեղմէր, ասիկա իմ երեսը տրտում կը նայէր. այս նայելը իմ սիրտի համար բալասան մը էր և կ'երևար թէ ըսել կ'ուզէր — նայէ Ուրիքա, դու միայն սիրուս կը հասկընաս։

Այն ատենը սեղրու ազատութեանը վրայ խօսիլ սկսեր էր. անհնարին էր որ այս խնդիրը ուժնակի սիրուս չը զբաւէր. դեռ մտածին յոյս մ'ալ ունէի, և կը խորհէի հաւատալով թէ ուրիշ երկրի վրայ, գոնէ, հանգամանքներ ունիմ. և որովհետև անոնք թշուառ և ողորմելի էին, ես կը կարծէի թէ, բարի էին, և անոնց բազդի վրայ շատ դութ ունէի։ Աւա՜ղ. այս կողմէ ալ իմ սխալիլը շուտով հասկըցայ։ Սէն Տոմէնկի (1) ջարդը ինձի նոր աղեյօշ տրտմութիւն մը տուաւ. մինչև այն օրը տրտմեր էի միայն թէ ինչու տարագիր սեռէ և տոհմէ մը եմ, հիմա ամօթահար կ'ըլլայի տեսնելով թէ մարդասպան և բարբարիկ մարդերու սեռէ եմ։

Մինչ այս մինչ այն, յեղաշրջումը փութանակի յառաջ կը քալէր, և ամեն մարդ կը զգար տեսնելով թէ բռնաբարոյ մարդերը տէրութեան բոլոր պաշտօններու մէջ կը մտնէին։ Շատ չանցաւ յայտնի եղաւ թէ, այս մարդերը ի մահ դրեր էին բանի մը չը խնայել և թագաւորը առաթուր կործանել։ Յունիսի 20 և օգոստոսի 10 ամսաթիւերը (2) և անուղի օրերը, հետագայ ալեկոծումը պատրաստեցին։ Այն ատենը մարեշալուհին ընկերութեան մէջ եղող մարդերը այս դի և այն դի ընկան. ոմանք հալածումէ փախելով օտար երկիր կ'ապաստանէին, և ոմանք կը պահըտէին կամ զաւառի մը մէջ կը քաշէին։ Մարեշալուհին ոչ փախաւ, և ոչ պահուեցաւ. իր սիրտի յարատև զբաղումով կապեալ

(1) Սէն Տոմէնկը անգլիեան կղզիներէ ամենէ մեծը է, 1801 - 1802 ին այն տեղ մեծ խռովութիւն եւ կոտորած եղաւ սեւերու կողմէ։

(2) Օգոստոսի 10ը երեւելի թիւ մը է Ֆրանսայի պատմութեան մէջ, ինչու որ այն օրը Բարիզի ժողովուրդը ոտք ելլալով եւ արքայական պալատը պաշարելով, հոն տեղի Հելվետեան պահակները թրէ անցուց, եւ արքայութեան մահածին հարուած մը տալա բռնադատելով Լուի ԺԶ իր պալատէ փախիլ եւ ազգային պատգամաւորները ապաւինիլ։

հան բեւեռած կը մնար յիշատակով մը եւ զերեզմանի մը քով։

Արդէն քանի մը տմիս կար որ միայնութեան մէջ ի՛ տարէ՛ինք, երբ, 1792ի վերջը, Թագաւորութեան կողմնապահ փոխատեանեբու զէմ վճիռ մը ելաւ, որով հայրենիքը չը զարգացուցին ինչը պիտի դրաւուէր։ Այսպիսի հանրական ապետի մէջ մարեշալուհին հոգը չէր ըլլար իր ինչը կորուսանելը, եթէ այն իր թուերունը չըլլար, և ինքը, ընտանեկան պայմանով և թուղթերով, միայն անոր եկամուտը վայելելու խրատնքը չունենար։ Ուստի որոշում ըրաւ որ Շարլը ամբորդութենէ ետ կանչէ, և անդրանիկը, որ այն ատենը զրեթէ քսան և մեկ տարեկան կար, Գոնտէին բանակը առաքէ (այս բանակը փախստեայ ազնուականներէ կը բաղկանար, տես Ֆրանսայի պատմութիւնը)։ Մարեշալուհին երկու թուերը ալ ան ատենը Իզպիսայի մէջ կը զտնուէին, և իրենց այն մեծ ճանապարհորդութիւնը կատարելու վրայ էին, որ երկու տարի առաջ սկսէր էին շատ տարբեր պարագաներու մէջ։ 1793ի փետրուարի առջի օրերը Շարլը Բարիզ հասաւ, Լուի ԺԶի սպանումէ քանի մը ժամանակ ետը։ Այս թագաւորին ղլխատումը մարեշալուհին ուժգին տրտմութիւն մը պատճառեր էր և անով զրաւեալ, և բոլորովին տրտմութեան ինքնատու, իր հոգին բուսական վեհութիւն ունէր ոչիրին համեմատ մեծ սոսկում մը զգայ դահիճներուն վրայ. ծերութեան մէջ տրտմութիւնը ազդելի կերպարանք մը ի՛ առնէ, միտքը անոր իշխանութիւն մը կը տայ որ ուրիշ հասակի մէջ չը նշմարուիր։ Մարեշալուհին այնքան կը տրտմէր կը կսկծար որ իր առողջութիւնը սկսաւ մնասիլ. ես չէի երևակայէր թէ այսպիսի բռնադոյն բարք մը հնարին ըլլայ մխիթարել, կամ զոնէ ուրիշ առարկայի մը դրաղել տալ։ Ես ալ իմ կողմէ կը լայի, անոր հետ համակամ համոզիչա կ'աշխատէի որ հոգիս վերնայ, մաքրըւի, և անոր հաստատուն որդէս ղի կարենամ, զոնեայ, անոր չափ տրամիլ անոր հետը։ Որչափ և ուր (terreur) անեց, զրեթէ բնաւ իմ վիշտերը չը ղղացի. այնպիսի վեհ տառապանքի ատեն, գիս թշուառ համարել, և իմ վրայ գթալ, ինձի ամօթալի բան մը կ'երևէր, տակէ գատ կարծես թէ, տառապանքը հանրական եղած օրէ իվեր, ա՛լ չէի զգար թէ միակ եմ. ինչու որ ամենու հետ կը տրտմէի։ Համամտութիւնը հայրենիքի մը կը նմանի. ինչ մը է որ միաբան կը վայելենք, և երբ օգնելու կամ պաշտպանելու ժամանակը գայ, համակամ եղբայր կ'ըլլանք։ Երբեմն իւրովի

կ՚ըսէի. — Եւ որ թշուառ սնունի մը եմ, հիմա վեհ ողիներու հաղորդ կը դանդրիմ, ինչու որ անոնց հաւասար արդարութեան ծարաւը կամ կարօտը կը զգամ. և երբ դայ այն օրը ուր առաքինութիւնը և ճշմարտութիւնը պիտի յաղթական ըլլան. այն օրը յիշեալ վեհ ողիներու և ինծի համար յաղթութեան օր պիտի համարի հաւասարապէս, այլ աւա՜ղ ո՛րքան մենէ հիռուէր այն օրը :

Շարլը դալէ քանի մը օր ետքը, մարեշալուհին դիւղը քաշեցաւ :

Բոլոր իր բարեկամները պահեալ էին կամ փախստեայ կ՚ապրէին, իր ընկերութիւնը զրեթէ ծերունի արբայէ մը կը բաղկանար որ, տասը տարիէ ի վեր, ինչպէս յականէ կը լսէի, հաւատը կատակելէ ուրիշ բան չիցտէր, և որ հիմայ կը բարկանար եկեղեցականներու ինչքը ծախսելուն համար, քանդի ինքը քսան հազար ֆրանք եկամուտ կը կորուսընէր: Այս արբան մեղի հետ Ամէն Ծերմէն եկաւ : Իր ընկերութիւնը անուշ էր, կամաւելի հիշց ըսեմ հանդարտ էր. իր մեղմ բնութիւնը անուշութիւն մը չունէր, իր մտային կերպէ յառաջ կը դար ան քանթէ իր սիրտի խաղաղութենէ : Մարեշալուհին իր բոլոր կեանքի մէջ այնպիսի վիճակ մը ուներ էր ուր շատ բարութիւններ ընելու ձեռնհաս եղեր էր : Տը Շուազէոյլի բարեկամուհին ըլլալով, ասոր երկար պաշտօնի առէնը կարող եղեր էր շատ մարդերու օգտակար ըլլալ :

(Պիտի շարունակի .)

Համարատու Տրլէդը :

Paris. — Imprimerie Walder, rue Bonaparte, 44.

ԱՐԵՒԵԼՔ

Ամիսը երկու անգամ կ՚ելլէ, մէկին և տասնվեցերորդին, տասն մէկ թերթ երկու թերթ ուքանալ։

ԳԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ

ԲԱՐԻՁ	ՕՏԱՐ ԵՐԿԻՐ
Տարեկանը . . . . . 20 Ֆ.	Տարեկանը . . . . . 26 Ֆ.

Ինչ որ յառաջարկեան և սուրբագրութեան կը վերաբերի, առ՝ Ս. Սարգիսեան տաքելու է, rue du Seine, 21։

Արեւելքը անվճար նամակ չ՚ընդունիր։

Ձեռագիրները հա չ՚են տրուիր կ՚այրուին։

ԴՈՐԾԱԿԱԼՔ

Ի ՊՕԼԻՍ . . . . . Ցարդի Ք. Պէրպէհանի Գրատունը
ԴԶՄԻՐ . . . . . Ցարդի Ալրիթարեանի Գրատունը։
ՍՄԻՌՆՈՅ . . . . . Ցարդի Տ. Գասպարեան Կրպակը։

PARIS. — IMPRIMERIE WALDER, RUE BONAPARTE, 11.